

ՏԵՔՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՐՔՄԵՆԻԿ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ, Բ.Գ.Թ.

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻՆ ՎԵՐԱԳՐՎՈՂ ՄԻ ԲԱՆԱՍԵՂԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Բանալի բառեր - վերագրում, անտիպ, տարբերակ, տարընթերցում, տեքստաբանություն, ինքնագիր, կեղծիք, վարկած

Բանաստեղծությունը

Եղիշե Չարենցի՝ 1996 թվականին Դավիթ Գասպարյանի աշխատասիրությամբ լույս տեսած «Նորահայտ էջեր» գրքում զետեղված է «Ինչ որ հույս էր...» սկսվածքով մի բանաստեղծություն:

*Ինչ որ հույս էր,
Ինչ որ լույս էր՝ մնաց թերի,
Իմ խեղճ հոգիս
Այս վանդակում մնաց գերի:
Ապրենք հույսով,
Վաղվա լույսով, իմ սիրելի,
Տեսնենք վաղը,
Կամ ապագան ի՞նչ կբերի:*

Ժողովածուի ծանոթագրություններում նշված է. «Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ՉՖ, թիվ 98: Առաջին անգամ հրատարակել է Դ. Գասպարյանը (տես՝ Չարենցը և Ստալինը. - ԳԹ, 1988, 15 հուլիսի, թիվ 29): Տես նաև՝ ՈՉ, էջ 275: Անթվակիր է: Գրած պետք է լինի 1936 կամ 1937 թթ.»:

Սեյրան Գրիգորյանի հոդվածն ու նկատառումները

Իր «Չարենցի անտիպ ժառանգության գնահատման մի քանի հարցեր» հոդվածում Սեյրան Գրիգորյանը միանգամից

ամրագրելով, որ «Ինչ որ հույս էր» բանաստեղծության «Ինքնագիրն ակնհայտորեն կեղծված է», հետագա էջերում բերում է իր կարծիքը հաստատող բազմաթիվ, այդ թվում՝ անհերքելի փաստեր: Բնագրագիտական, տեքստաբանական, ոճական, համադրական վերլուծություններով, արխիվային նյութերի և հուշագրական հղումների վկայակոչմամբ՝ Սեյրան Գրիգորյանը ուղղակի կասկածի տեղ չի թողնում, որ բանաստեղծությունն ակնհայտորեն չի պատկանում Եղիշե Չարենցի գրչին, թեպետ, ինչպես գիտական պատշաճությունն է պահանջում, գրականագետը խնդիրը ձևակերպում է իբրև «այս կամ այն երկի հեղինակային պատկանելության» առեղծված, և իր ուսումնասիրությունը դիտարկում որպես «օգնություն» «առաջադրված վարկածի գիտական լուծմանը»:

Բայց անգամ այս ուսումնասիրության հրապարակումն ու նրանում առկա փաստարկները, մանավանդ այն, որ «Չարենցի թղթերի մեջ չկա այս բանաստեղծության՝ նրա ձեռքով գրված ինքնագիրը, գործը չպետք է տեղ գտնի չարենցյան որևէ հրատարակության մեջ», չխանգարեցին, որ «Նորահայտ էջերի» կազմող Դավիթ Գասպարյանը Չարենցին վերագրվող «Ինչ որ հույս էր» բանաստեղծությունը հետագայում զետեղի իր կազմած ժողովածուներից ևս մեկում:

Բացի այդ, տարբեր հրապարակումներում, անդրադարձներում, հաղորդումներում, էլույթներում այդ բանաստեղծությունը մեջբերվել, արտասանվել, ներկայացվել և շարունակվում է մեջբերվել, արտասանվել, ներկայացվել որպես Չարենցի՝ բանտում ունեցած հոգեկան ապրումների արտահայտություն, երբեմն ավելին՝ որպես Չարենցի՝ մեզ հասած վերջին բանաստեղծություն:

Վահրամ Ալազանի «ուրվականը»

«Ինչ որ հույս էր» բանաստեղծության հեղինակային պատկանելության շուրջ Սեյրան Գրիգորյանի վերլուծությունների ու վկայակոչումների վարկածային հատույթում առանձնացնելի է երկու հանգամանք.

ա) Բանաստեղծությունը չունի հեղինակային ինքնագիր, տարածվել է **բանավոր ճանապարհով** և գրի է առնվել այլ մարդկանց կողմից, և

բ) Ձեռագրի վրա առկա մատիտով մի նշում՝ «Ումանք Էլ վերագրում են Ալազանին», որի դրդմամբ Էլ այսպես ասած՝ միակ անվանական սևեռում-վարկածը վերաբերում է Վահրամ Ալազանին:

Սեյրան Գրիգորյանը հանգամանալից աշխատանք է կատարել նաև այս ուղղությամբ, հատկապես՝ Վահրամ Ալազանի արխիվի հասանելի մասի ուսումնասիրության և «Ինչ որ հույս էր» բանաստեղծությունը 1930-50-ական թվականներին նրա գրած բանաստեղծությունների ոճի ու բառապաշարի հետ զուգադրման առումով: Եվ ընդհանրապես, Սեյրան Գրիգորյանը գիտական բարեխղճությամբ ուսումնասիրել և ներկայացրել է ամեն ինչ, որպեսզի ճշտվի «Ինչ որ հույս էր» բանաստեղծության հեղինակային պատկանելությունը, կարելի է ասել՝ չի արվել վերջին քայլը, որն իբր կռահում նույնպես առկա է նրա հողվածում. «Միգուցե նրա (Վահրամ Ալազանի.- Ա. Ն.) ամբողջական արխիվում հնարավոր կլինի գտնել անհրաժեշտ ինչ-որ տվյալներ»:

Գրեթե վերջին քայլը

Նախ՝ խոստովանենք, որ այդ **գրեթե վերջին քայլին** ինքներս գնացել ենք հանգամանքների բերումով: Ընդ որում չենք կատարել անգամ փաստերի վերստուգում՝ ամբողջովին վստահելով Սեյրան Գրիգորյանի հողվածում առկա տվյալներին:

Առաջարկություն եղավ վերահրատարակել Վահրամ Ալազանի՝ 1990 թվականին առանձին գրքով լույս տեսած «Տառապանքի ուղիներով» հուշագրությունը՝ նրա բանտարկության և արքայի տարիների մասին: Վստահ լինելով, որ այդ հրատարակության մեջ անխուսափելիորեն եղել են խմբագրումներ և մկրատումներ, խնդրեցինք Վահրամ Ալազանի դստերը՝ Հասմիկ Ալազանին, տրամադրել հուշագրության բնագիրը, եթե, իհարկե, պահպանվել է: Պարզվեց, որ Հասմիկ Ալազանի մոտ պահպանվում է այդ հուշագրության մեքենագիր հեղինակային օրինակը: Այն մեծադիր թերթերից բաղկացած 500 էջանոց հատոր է, և հպանցիկ համեմատությունն անգամ վկայում է, որ 1990 թվականին Ալազանի հուշագրությունը հրատարակվել է մկրատումներով ու խմբագրումներով: Փոխվել է նաև վերնագիրը՝ «Տառապանքի ուղիներում»-ը դարձել է «Տառապանքի ուղիներով»:

Սկսեցինք զբաղվել հուշերի նոր հրատարակության պատրաստմամբ՝ միշտ աչքի առաջ ունենալով նաև Սեյրան Գրիգորյանի կռահումները «Ինչ որ հույս էր» բանաստեղծության հեղինակային պատկանելության վերաբերյալ:

Մեզ հետաքրքրող հարցի տեսանկյունից ուշագրավ կամ հետաքրքրական են հետևյալ մանրամասները:

ա) Ալազանը գրում է, որ բանտում բանաստեղծություններ գրել է հետևյալ կերպ. «...ոչ թուղթ էր մեզ թույլատրվում, ոչ էլ՝ մատիտ: Ես ճարը գտա: Լուցկիները վառում, ապա հանգցնում էի և ածխացած ծայրով, ծխախոտի թղթի վրա գրում»: Շարունակության մեջ, որը մկրատվել է հուշերի հրատարակված գրքում, Ալազանը շարունակում է. «Գրելուց հետո բերանացի արի, այն նպատակով, որ «ձեռագիրս» կորցնելուց հետո այն հիշեմ: Ահա այսօր այն առաջին անգամ հանձնեցի թղթին»: Հետագայում բազմիցս Ալազանը «բերանացի է արել» իր նոր բանաստեղծությունները և միայն 20-25 տարի անց հիշելով հանձնել թղթին: Ընդ որում՝ այդ բանաստեղծություններից շատերը նա նաև պարբերաբար արտասանել է խցում և կալանավորներից շատերը նույնպես անգիր են իմացել դրանք. «Պատրիկ Սարոյանն ու մի քանի այլ մտավորականներ այն անգիր արեցին և կամերայում հաճախակի արտասանում էին»: Այլ խոսքով՝ բանաստեղծության **բանավոր** տարածման ճանապարհը շատ ընդունված էր բանտային պայմաններում և կոնկրետ Վահրամ Ալազանի բանաստեղծությունները այդ ճանապարհով շատ էին տարածվում:

բ) Բանտում կալանավորները միմյանց նամակներ են գրել ու հաղոդագրություններ են թողել՝ գրառումներ կատարելով բանտի բաղնիքի պատին: Ալազանի հուշերի հրատարակված տարբերակում վկայագրված են այսպես կոչված՝ բաղնիքային տեքստերի մի շարք օրինակներ: Մեքենագիր տարբերակում, սակայն, գործ ունենք բաղնիքային մի ամբողջ նամակագրության հետ՝ «համեմված» բանաստեղծական տեքստերով: Ահա այստեղ է, որ Ալազանը մեջբերում է մեզ հետաքրքրող բանաստեղծությունը. «Մարոյի գրածի կողքին ես գրեցի հետևյալ բանաստեղծությունը.

Ինչ որ կյանք էր, ինչ որ սեր էր, մնաց թերի,

*Մեր բորբ հոգին վանդակի մեջ մնաց գերի,
Ապրենք հույսով, վաղվա լույսով, անմեռ հույզով,
Հին համբույրի քաղցրությունը մեր շուրթերին»:*

Չարենցին վերագրված «Ինչ որ հույս էր» բանաստեղծության համեմատությամբ, այստեղ կան բազմաթիվ տարբերություններ, բայց ակնհայտ է, որ դրանք **Նույն հեղինակի նույն բանաստեղծություններն են**, ինչպես տեքստաբանության մեջ է ընդունված ասել՝ տարընթերցումներով: Ճիշտ է, այս դեպքում կարելի է կիրառել **տարլսում** եզրը՝ հաշվի առնելով, որ բանաստեղծությունը տարածվել է բանավոր ճանապարհով:

Ուշագրավ է, որ այդ քառյակը վկայագրված է նաև Ալազանի տիկնոջ՝ Մարո Ալազանի հուշերում, որ լույս տեսան վերջերս: Ճիշտ է, շատ չնչին տարբերություններով: «Հերթական բաղնիքի օրը,- գրում է Մարո Ալազանը,- մատիտը մազերիս հյուսի մեջ սեղմած՝ մտա բաղնիք և անմիջապես վազեցի դեպի «պատի թերթը»: Այնտեղ գտա Ալազանի մի նոր քառյակ: Ահա նա.

*Ինչ որ սեր էր, ինչ որ կյանք, մնաց թերի,
Մեր բորբ հոգին վանդակի մեջ մնաց գերի,
Ապրենք հույսով, վաղվա լույսով, անմեռ հույզով,
Հին համբույրի քաղցրությունը մեր շուրթերին:*

Քառյակը արտագրեցի ծխախոտի թղթի վրա և Իզաբելլային խնդրեցի, որ նա Ալազանին ռուսերենով պատասխանի: Իզաբելլան ռուսերենով բանաստեղծության տակին գրեց՝ «չիտալի»:

Երկու հարց, որ բնականորեն կարող են ծագել այս պարագայում.

ա) Ինչո՞ւ են տարբեր Ալազանի գրառած տարբերակը և տարածված տարբերակը:

Ալազանը բանտի բաղնիքին գրված բանաստեղծությունը գրի է առել մոտ 25 տարի անց, հիշողությամբ: Ընդ որում չենք բացառում, որ բանավոր տարածված տարբերակն առավել համապատասխան է այն տարբերակին, որ Ալազանը ժամանակին գրել է բանտի բաղնիքի պատին, քան իր՝ 25 տարի անց գրի առած տարբերակը: Այստեղ կա մի շատ

Նուրբ հոգեբանական գործոն, որը զգալի է «Տառապանքի ուղիներում» հուշագրության մեքենագիր տարբերակում: Բանն այն է, որ Ալազանը ոչ թե անձամբ է գրի առել իր հուշերը, այլ թելադրել է կնոջը՝ Մարոյին, և այդ առումով վերջինիս հետ կապված դրվագները Ալազանը, մեր տպավորությամբ, փոքրինչ ավելի է հուզականացնում, տեղ-տեղ՝ նույնիսկ գունագարդում: Բանաստեղծությունն էլ գերծ չէ նման միտումից:

բ) Ինչո՞ւ է բանաստեղծությունը վերագրվել Չարենցին:

Այս հարցի պատասխանը թերևս նախ հոգեբանական է. բոլոր բանտարկյալներն էլ գիտեին, որ Չարենցը նույնպես իրենց հետ բանտում է, իսկ բանաստեղծություն-Չարենց համաբանությունը ամենաենթադրելին է: Մանավանդ որ՝ ինչպես Մորուս Հասրաթյանի հուշերում ենք կարդում բանտի բաղնիքի պատին գրված է եղել նաև հենց Չարենցի բանաստեղծություններից մեկը՝ «Նրա նշանավոր քառյակը, որ ոչ մի ուժ չի կարող իրեն բաժանել իր շննդալից, պայծառ քնարից»: Երկրորդական չէ նաև այն հանգամանքը, որ իր բանաստեղծությունը բաղնիքի պատին Ալազանը գրել է Չարենցի մահից օրեր հետո՝ դեկտեմբերի 2-ից 7-ն ընկած հատվածում, և բնական է, բանտարկյալների մոտ, Չարենցի մահվան լուրի տպավորությամբ, բանաստեղծությունը կարող էր ընկալվել որպես Չարենցի այսպես ասած՝ հրաժեշտի խոսք:

Եվ ոչ մի գրքում...

Նկատի ունենալով Սեյրան Գրիգորյանի «Չարենցի անտիպ ժառանգության գնահատման մի քանի հարցեր» հոդվածում ներկայացված փաստարկները և մեր այս հոդվածում հրապարակված բանաստեղծական տեքստը, կարծում ենք, որ այսուհետ Չարենցին վերագրվող «Ինչ որ հույս էր» բանաստեղծությունը չպետք է տեղ գտնի նրա երկերի և ոչ մի հրատարակությունում:

Այդ բանաստեղծության հեղինակը Վահրամ Ալազանն է:

ARKMENIK NIKOGHOSYAN - ABOUT A POEM ATTRIBUTED TO YEGHISHE CHARENTS: Based on the facts newly revealed in the article, it is proved that the author of the poem, which has been attributed to Yeghishe Charents for years, is in fact Vahram Alazan.

Key words: attribution, unreleased, version, textology, autograph, forgery, hypothesis

АРКМЕНИК НИКОГОСЯН - ОБ ОДНОМ СТИХОТВОРЕНИИ, ПРИПИСЫВАЕМОМ ЕГИШЕ ЧАРЕНЦУ: На основании нововыявленных в статье фактов доказывається, что автором стихотворения, которое годами приписывали Егише Чаренцу, на самом деле является Ваграм Алазан.

Ключевые слова: приписывание, неизданный, версия, текстология, автограф, подлог, гипотеза.

REFERENCE

1. Yeghishe Charents, Norahayt ejer, Yerevan, 1996.
2. Seyran Grigoryan, Charentsi bnagire, Yerevan, 2013.
3. Yeghishe Charents, Entir yerker yereq hatorov, hator G, Yerevan, 2012.
4. Vahram Alazan, Tarapanqi ughinerov, Yerevan, 1990.
5. Maro Alazan, Im kyanqi voghbergutyune, Yerevan, 2020.